

## ԾՐԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի, հիմնական գործառույթներն են՝

ա) սակագների սահմանում (վերանայում), դրանց կարճաժամկետ և երկարաժամկետ փոփոխության կանխատեսում,

բ) էլեկտրաէներգիայի առաքման (արտադրության), ներկրման և արտահանման քվոտաների սահմանում,

գ) բնագավառի տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորման գործընթացի կանոնակարգում, լիցենզիաների տրամադրում, լիցենզիայով սահմանված պայմանների պահպանման վերահսկողություն և խախտումների համար տույժերի կիրառում,

դ) բնագավառի տնտեսավարող սուբյեկտների պայմանագրային հարաբերությունների կանոնակարգում, տարաձայնությունների քննարկում,

ե) սպառողների և բնագավառի տնտեսավարող սուբյեկտների հարաբերությունների (պայմանագրային կամ նորմատիվ-իրավական) կանոնակարգում:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի միջոցով (49 աշխատող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

Սակագնային քաղաքականության վարչություն

- սակագնային բաժին
- ֆինանսական վերլուծության բաժին

Իրավաբանական և լիցենզիոն մոնիթորինգի վարչություն

- իրավաբանական- լիցենզիոն բաժին

- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի բաժին
- Գործերի կառավարչություն
- քարտուղարություն
  - տնտեսական ծառայություն

## **2. Սակագնային քաղաքականություն**

Հանձնաժողովի որդեգրած սակագնային մեթոդաբանությունը հիմնված է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա, որն ընդունված է ամբողջ աշխարհում և բխում է նաև «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներից: Այն ենթադրում է, որ սակագների միջոցով բոլոր ընկերություններում պետք է ձևավորվի այնպիսի հասույթ, որը կբավարարի նրանց հուսալի և անվտանգ գործունեության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացումը, օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների իրատեսական ծառայության ժամկետից ելնելով՝ հաշվարկված մաշվածության հատուցումը և ընկերություններում ներգրավված կապիտալի դիմաց խելամիտ շահույթի ապահովումը:

Խելամիտ շահույթի որոշման խնդիրը, որը փաստորեն հանձնաժողովի կողմից ընկերությունների զուտ ակտիվների նկատմամբ շահութաբերության նորմայի հաստատումն է, մենաշնորհային ձեռնարկությունների պետական կարգավորման հիմնական խնդիրներից մեկն է: Այն չպետք է լինի և չափազանց բարձր՝ հանգեցնելով սակագնի աճի, և ցածր՝ խոչընդոտելով անհրաժեշտ ներդրումների հոսքը էներգետիկայի ոլորտ: Այս առումով առավել կարևորվում են հետևյալ հանգամանքները.

- մինչ այժմ էներգետիկայի ոլորտի ընկերությունները 100%-ով պետական սեփականություն են (բացի փոքր ՀԷԿ-երից և բնական գազի ոլորտից) և պետությունը բավարարվում է գոյություն ունեցող ակտիվների նկատմամբ ցածր շահույթի նորմայով: Սակայն այս մոտեցումը չի կարող պահպանվել նոր ներդրումների հաշվին ստեղծվող ակտիվների համար:
- էներգետիկայի ոլորտում ներդրումների ծավալները մեծ չեն և իրականացվում են հիմնականում պետական վարկերի և դրամաշնորհների հաշվին.

- մասնավոր կապիտալի ոչ մեծ ներհոսքը պայմանավորված էր միայն փոքր ՀԷԿ-երի սեփականաշնորհմամբ և գոյություն ունեցող ջրանցքների ու խմելու ջրի ջրատարների վրա՝ քիչ ծախսեր պահանջող փոքր ՀԷԿ-երի կառուցմամբ:
- էներգահամակարգի հետագա հուսալի և անվտանգ աշխատանքն ապահովելու համար պահանջվում են խոշոր ներդրումներ, որոնց իրականացումը հնարավոր է միայն մասնավոր կապիտալի ներգրավմամբ: Այդ գործընթացն արդեն սկսվել է բաշխող ցանցերի մասնավորեցմամբ և, հավանական է, կշարունակվի սեփականաշնորհման ծրագրում ընդգրկված արտադրող կայանների մասնավորեցմամբ: Բացի այդ, այժմ քննարկվում են մասնավոր կապիտալի մասնակցությամբ Երևանի ՋԷԿ-ի վերակառուցման, Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության ավարտի և մի շարք մեծ ու փոքր ՀԷԿ-երի կառուցման նախագծեր:

Բնական է, որ մասնավոր կապիտալը չի կարող բավարարվել պետական ընկերությունների համար կիրառվող շահույթի նորմայով, և հանձնաժողովը պետք է հստակեցնի իր դիրքորոշումը թույլատրելի շահույթի վերաբերյալ:

Ջարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում շահույթի թույլատրելի նորման հաշվարկվում է՝ ելնելով ընկերությունների կապիտալի կառուցվածքից, բաժնետիրական և փոխառու կապիտալի արժեքներից, որոնք ձևավորվում են ֆոնդային և ֆինանսական շուկաներում: Հայաստանի պայմաններում առայժմ հնարավոր չէ կիրառել այդ մոտեցումը՝ նշված ֆինանսական ինստիտուտների թերկայացած լինելու պատճառով:

Բաշխիչ ցանցերի մասնավորեցման գործընթացի նախնական փուլերում կատարված տարբեր ուսումնասիրությունների արդյունքում, հաշվի առնելով նման պայմաններում գտնվող երկրների փորձը, հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ մոտակա տարիներին Հայաստանի էներգետիկայի ոլորտում մասնավոր ներդրումների համար ընդունելի շահութաբերության նորման գտնվում է 15-16 %-ի սահմաններում: Այդ նորման մոտակա հինգ տարվա համար ամրագրվել է բաշխիչ ցանցերի հետ կնքվելիք սակագնային համաձայնագրի նախագծում և օգտագործվում է նաև սեփականաշնորհված ու նոր կառուցվող փոքր ՀԷԿ-երի սակագների հաշվարկներում:

Սակագների աճը զսպելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով, որ համակարգն այսօր նոր արտադրող հզորությունների խիստ կարիք չունի, նոր կառուցվող ՀԷԿ-երի համար, բացի շահույթի նորմայից, 2000 թվականին սահմանվել էր նաև առավելագույն սակագին՝ 3.0 ամերիկյան ցենտի (առանց ԱԱՀ-ի) չափով՝ խրախուսելու, առաջին հերթին, այդ կայաններից ամենաշահավետների կառուցումը: Սակայն մասնագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ այդ սահմանափակումն այսօր խոչընդոտում է հիդրոէներգետիկայի զարգացումը:

Հանձնաժողովը գտնում է, որ տեղական հիդրոէներգետիկ պաշարների օգտագործումը հանրապետության էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման կարևորագույն ուղղություններից մեկն է, որն իր հերթին կնպաստի երկրի անվտանգության բարձրացմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսապես արդարացված հիդրոպոտենցիալի օգտագործման դեպքում նոր մեծ և փոքր ՀԷԿ-երը կարող են արտադրել տարեկան 1200 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը կազմում է այսօրվա ամբողջ արտադրության շուրջ 20 %-ը:

Փոքր ՀԷԿ-երի զարգացումը լուծում է նաև մի շարք այլ կարևոր խնդիրներ, մասնավորապես, տեղական մասնավոր կապիտալի ներգրավում արտադրության ոլորտ, հանրապետության մարզերում նոր աշխատատեղերի ստեղծում և տեղական արդյունաբերությունը լրացուցիչ պատվերներով ապահովում:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և նպատակ ունենալով խթանել փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացումը, հանձնաժողովը նախատեսում է հետագա տարիներին աստիճանաբար բարձրացնել նոր կառուցվող փոքր ՀԷԿ-երի համար սահմանվող առավելագույն սակագինը:

Հանձնաժողովը նոր մոտեցումներ է ցուցաբերել մասնավորումից հետո բաշխիչ ընկերությունների նկատմամբ իրականացվելիք սակագնային քաղաքականությանը: Ելնելով Ազգային ժողովի կողմից ընդունված բաշխիչ ցանցերի մասնավորեցման օրենքի պահանջներից, մշակվել է սակագնային համաձայնագրի նախագիծ, որը պետք է ներկայացվի ներդրողներին՝ որպես սեփականաշնորհման փաստաթղթերի փաթեթի մաս, և որում մանրամասն նկարագրվում է հանձնաժողովի կողմից վարվելիք սակագնային քաղաքականությունը հետագա տարիների ընթացքում: Այդ քաղաքականության հիմնական դրույթներն են՝

- մասնավորեցումից հետո հետագա երեք տարիների ընթացքում բաշխիչ ցանցերի սակագնային մարժաները (վաճառքի և գնման միջին կշռությամբ սակագների տարբերությունը) մնում է անփոփոխ՝ 2000 թվականի մակարդակին.
- հետագա հինգ տարիների (2004-2008թթ.) ընթացքում սակագնային մարժաները կհաշվարկվեն հանձնաժողովի կողմից սահմանված բանաձևով, ապահովելով շահույթի ամրագրված շուրջ 16 % նորման.
- սակագների հաշվարկում, ինչպես և նախկինում, կընդգրկվեն միայն էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստները.
- կատարվող բոլոր ներդրումային նախագծերը, որոնք կարող են հանգեցնել սակագների փոփոխման, պարտադիր կարգով պետք է համաձայնեցվեն հանձնաժողովի հետ.
- 2009 թվականից սկսած՝ սակագնային մարժաները կհաշվարկվեն վերը նշված մոտեցումներով, սակայն շահույթի նորման կհաշվարկվի՝ ելնելով ընկերությունների կապիտալի իրական (հաշվարկային) արժեքից (ձևավորված ֆոնդային և ֆինանսական շուկաներում):

Ներկայումս հանրապետությունում էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի մեծածախ գործարքները կատարվում են «Հայէներգո» ՓԲԸ-ի միջոցով, որը արտադրողներից ձեռք է բերում էլեկտրաէներգիան՝ մեծածախ գնման սակագներով և վաճառում բաշխիչ ցանցերին՝ մեծածախ վաճառքի սակագներով: Մեծածախ գնման, ինչպես նաև մեծածախ վաճառքի սակագները միադրույք են և տարբերակված՝ յուրաքանչյուր արտադրող կամ բաշխող ընկերության համար: Մեծածախ վաճառքի սակագների մեջ ներառված են «Բարձրավոլտ ցանցեր» ՓԲԸ-ի և «Հայէներգո» ՓԲԸ-ի կողմից մատուցված ծառայությունների վճարները:

Մանրածախ սպառողները բաժանված են խմբերի՝ ըստ մատակարարվող էլեկտրաէներգիայի լարման: Ներկայումս գործող սակագնային համակարգը էլեկտրաէներգիայի բոլոր սպառողների համար նախատեսում է գիշերային և ցերեկային ժամերի համար տարբերակված սակագներով վճարման հնարավորություն՝ նպատակ ունենալով խթանել էլեկտրաէներգիայի գիշերային սպառումը:

Նախատեսվում է աստիճանական անցում կատարել արտադրության և սպառման ոլորտների արդյունավետությունը խթանող երկդրույք սակագնային համակարգի (էլեկտրաէներգիայի և հզորության համար):

Տարբեր էլեկտրակայանների միջև բեռի բաշխումը հիմնված կլինի տնտեսական կարգավարման (ֆՍՍՎՏՎՈփպրՍՏպ ՊՌրտպՑփպՐՈՐՏՉՈՎՈպ) սկզբունքների վրա: Էլեկտրաէներգիա արտադրողների համար կսահմանվեն երկդրույք սակագներ՝ էլեկտրաէներգիայի սակագին (դրամ/կՎտժ) և հզորության վճար (դրամ/ՄՎտ): Երկդրույք սակագների ներդրումը կիրականացվի էլեկտրաէներգիայի արտադրության համար կատարված հաստատուն և փոփոխական ծախսերի հստակ տարանջատման հիման վրա: Այդ դեպքում կապահովվի կայանների ստացած հասույթի կայունությունը, ինչպես նաև կխրախուսվի սարքավորումների պատրաստականության ապահովումը:

«Հայէներգո» ՓԲԸ -ն կիրականացնի միայնակ գնորդ-վաճառողի գործառույթները: Կտարանջատվեն համակարգի կարգավարման ծառայությունների իրականացման, մեծածախ վաճառքի պայմանագրերի կնքման և հաշվարկային կենտրոնի գործառույթները: Էներգետիկ շուկայի մասնակիցների միջև առք ու վաճառքի ֆինանսական հոսքերը կիրականացվեն հուսալի բանկային կազմակերպության միջոցով:

«Բարձրավոլտ ցանցեր» ՓԲԸ-ն կպահպանի էլեկտրաէներգիա տեղափոխելու իր գործառույթը, որի դիմաց կստանա ծառայություն մատուցելու վճար: Այդ վճարը կտրվի՝ ելնելով տեղափոխած էլեկտրաէներգիայի քանակից (կՎտժ) և հզորությունից (ՄՎտ):

Բաշխիչ ցանցերին էլեկտրաէներգիայի մեծածախ վաճառքի սակագները սկզբնական փուլում կշարունակեն մնալ միադրույք, իսկ հետագայում դրանք կփոխարինվեն երկդրույք սակագներով՝ էլեկտրաէներգիայի և հզորության համար (տեխնիկական միջոցների պահանջվող հագեցվածության պարագայում):

2001 թվականին վերջնական սպառողների համար էլեկտրաէներգիայի սակագները կմնան անփոփոխ:

### **3. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաշվեկշիռների կանխատեսումը**

Էլեկտրաէներգիայի 2000 թվականի հաշվեկշիռի (հավելված 1) կանխատեսման հիմքում դրված են հետևյալ մոտեցումները.

- ՀԷԿ-երի կողմից արտադրվելիք էլեկտրաէներգիայի առավելագույն օգտագործում.
- ՀԱԷԿ-ի հավասարաչափ և տեղակայված հզորությանը մոտ կամ հավասար բեռնվածության ապահովում, որը կնպաստի նրա անվտանգ շահագործման ապահովմանը և ծախսերի նվազեցմանը.
- արտադրող կայանների ռեժիմների վրա սպառողների (բնակչության) համար կիրառվող գիշերային սակագների կանխատեսվող ազդեցության գնահատում:

Ջերմային էներգիայի 2000 թվականի հաշվեկշիռի (հավելված 2) կանխատեսումն իրականացվել է տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

Բնական գազի 2001 թվականի հաշվեկշիռի կանխատեսումը ներկայացված է հավելված 3-ում:

Ըստ նախնական կանխատեսումների, 2001 թվականին շուրջ 20.0 հազ. բնակարաններում, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում, կվերականգնվի գազամատակարարումը, որի տեմպերը կարող են կտրուկ աճել, եթե մինչև 2000 թվականի ավարտը հաստատվեն բազմաբնակարան շենքերի գազիֆիկացման շինարարական նոր նորմերն ու կանոնները, որոնցով նորմատիվ-իրավական հիմքեր կստեղծվեն գազահաշվիչները բնակարաններից դուրս տեղադրելու համար:

Բնական գազի հաշվառման համակարգի արդիականացման ուղղությամբ տարվող աշխատանքների (նոր, բարձր ճշտության էլեկտրոնային ծախսաչափերի և գազահաշվիչների ներդրում), ինչպես նաև գազատարների առանձին հատվածների հիմնական նորոգումների իրականացման շնորհիվ բնական գազի տեխնոլոգիական կորուստները կնվազեն:

#### **4. Լիցենզավորում և լիցենզիայի պայմանների հսկողություն**

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը իրականացնում է լիցենզավորման համակարգի միջոցով մենաշնորհի հանդիսացող էներգետիկայի բնագավառի կարգավորման և բնագավառի տնտեսավարող սուբյեկտների ու սպառողների շահերի հավասարակշռմանն ուղղված աշխատանքները:

2000 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից տրվել է 7 գործունեության լիցենզիա, որոնցից 3-ը՝ փոքր ՀԷԿ-ի կառուցման, 2-ական՝ էլեկտրաէներգիայի արտահանման և էլեկտրաէներգիայի արտադրության: Քննարկման ընթացքում են 2 փոքր ՀԷԿ-երի կառուցման, մեկական էլեկտրաէներգիայի արտադրության և ջերմային էներգիայի արտադրության գործունեության լիցենզիա ստանալու հայտեր:

Վերլուծելով տնտեսավարող սուբյեկտների գործունեության ցուցանիշները, հաշվի առնելով սպառողների սպասարկման որակը, ինչպես նաև բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման գործընթացը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովում աշխատանքներ են տարվում գործունեության լիցենզիաներում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Լիցենզավորման գործընթացը և լիցենզիաների պայմանների պահպանումը կարևորվում են այն առումով, որ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտները հիմնականում գործում են մենաշնորհային շուկայում, իսկ որոշ սուբյեկտներ՝ տեղափոխող և բաշխող ընկերությունները, բնական մենաշնորհատերեր են: Եվ այս պարագայում պետության ու հասարակության շահերի պաշտպանության ամենագործուն լծակը լիցենզավորված գործունեության պայմանների սահմանումն է և դրանց պահպանման վերահսկումը:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո էներգետիկայի համակարգում իրականացված կառուցվածքային բարեփոխումները, ազատականացման և ապապետականացման գործընթացները, ինչպես նաև



բնագավառի զարգացման դինամիկան առաջ են բերել «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում էական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը կարևորում է «Էներգետիկայի մասին» ՀՀ փոփոխված օրենքի ընդունումը նաև այն առումով, որ առաջարկվել է օրենքով սահմանել էներգետիկայի բնագավառի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, հստակեցնել և կանոնակարգել հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի, իրավասություններն ու պարտականությունները, էներգետիկայի բնագավառի կարգավորման սկզբունքներն ու միջոցները:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը մշակել և սահմանված կարգով համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացրել «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որում վերը նշված հարցերի հետ մեկտեղ հստակեցվել են նաև ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի՝ լիցենզիայի պայմանների վերահսկման, տույժերի ու տուգանքների կիրառման իրավունքները, ինչը կնպաստի այդ աշխատանքների ակտիվացմանը, տնտեսավարող սուբյեկտների պատասխանատվության բարձրացմանը:

Տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորման գործընթացում առ այսօր ներգրավված են բնագավառի բոլոր ոլորտները՝ բացառությամբ ջերմամատակարարման: Այդ ոլորտում գոյություն ունեցող իրավիճակը՝ ջերմամատակարարման համակարգի պահպանման և զարգացման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների բացակայությունը, տնտեսավարող սուբյեկտների կարգավիճակի, վարչական պատկանելության և կազմակերպական կառուցվածքի շուրջ տարվող քննարկումների շարունակումը, հնարավորություն չեն տվել 2000 թվականին ավարտելու այդ ոլորտում գործող սուբյեկտների լիցենզավորման գործընթացը:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը մեծ նշանակություն է տալիս նաև էներգամատակարար-սպառող հարաբերությունների թափանցիկության և փոխվստահության ապահովմանը, ինչպես նաև բնագավառում տիրող իրավիճակի և հետագա զարգացման խնդիրների մասին սպառողներին պարբերաբար իրազեկմանը, ենթաբաժանորդ-բաժանորդ-բաշխող փոխհարաբերությունների հստակեցմանը:

2001 թվականին ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են լինելու գործունեության լիցենզիաների պայմանների պահպանման վերահսկման

մեխանիզմների, գազամատակարարման վերականգնման պայմանների, էլեկտրամատակարարման դադարեցման կամ այլ պատճառներով սպառողների գույքին հասցված վնասի ֆինանսական հատուցման, էլեկտրաէներգիայի մատակարարումների սահմանափակումների չափի, տևողության և այդ մասին սպառողներին տեղեկացման կարգերի մշակման, ինչպես նաև բնական գազի ներկրման և էլեկտրական էներգիայի արտահանման խնդիրները, որոնց կանոնակարգման համար անհրաժեշտ է հստակ ձևավորել համապատասխան իրավական դաշտ:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի մասնակցությամբ մշակվել են մի շարք օրենքների և իրավական ակտերի նախագծեր: Այդ աշխատանքները շարունակվելու են նաև 2001 թվականին: Անհրաժեշտ է նաև հստակ տարանջատել «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով հանձնաժողովին վերապահված իրավասությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն նշված օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի հիմնական խնդիրը էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց համար միատեսակ պայմաններ սահմանելով՝ սպառողներին հիմնավորված սակագնով հուսալի և անվտանգ էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի մատակարարման երաշխիքների ապահովումն է, գտնում ենք, որ հանձնաժողովը պետք է մշակի և ընդունի իրավական ակտեր, որոնք թույլ կտան և կնպաստեն լիարժեք իրականացնելու իր առջև դրված խնդիրները: Մասնավորապես, դա վերաբերում է «էլեկտրական էներգիայից օգտվելու կանոններին» (ԷՕԿ), «Բնական գազից օգտվելու կանոններին» (ԳՕԿ), «Ջերմային էներգիայից օգտվելու կանոններին» (ՋԷՕԿ), «Նոր գազիֆիկացման կամ գազամատակարարման վերականգնման կարգին» և այլն, քանի որ այս փաստաթղթերի նորմերը ուղակիորեն առնչվում են սակագների ձևավորմանը:

«էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «դ» ենթակետի համաձայն, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովն է մշակում և կիրառում մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերը: Իսկ դրանց ուղակիորեն առնչվող վերը նշված փաստաթղթերը, որոնք պարունակում են նաև մատակարարման պայմաններին վերաբերող դրույթներ, մշակվել և հաստատվել են ՀՀ կառավարության կողմից: Ըստ էության, այս փաստաթղթերի բովանդակության մեծ մասը հրապարակային

պայմանագրերի դրույթներ են, իսկ այդ պայմանագրերի օրինակելի ձևերը, ինչպես նշեցինք, մշակում և կիրառում է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ա» ենթակետի համաձայն, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովն է սահմանում էլեկտրական և ջերմային էներգիայի ու բնական գազի սակագները, որոնք ուղղակիորեն առնչվում են նշված փաստաթղթերի հետ: Քանի որ սպասարկման որակը որոշակի գումար արժե, մեր համոզմամբ, միասնական ու հավասարակշռված քաղաքականություն իրականացնելու համար բնագավառին ներկայացվող պահանջների և դրանց իրականացման արժեքի որոշման պատասխանատվությունը հանձնաժողովը պետք է վերցնի իր վրա:

Հարցը ավելի է կարևորվում բաշխող ցանցերի սեփականաշնորհման պարագայում, քանզի սպասարկման որակի նկատմամբ չհավասարակշռված պահանջների սահմանման դեպքում կարող ենք ունենալ անկանխատեսելի սակագներ:

### ***5. Լիցենզավորված ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն***

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձինք ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հիման վրա մշակված ձևերով հաշվետվություններ են ներկայացնում հանձնաժողով:

Էներգահամակարգի գործունեության ֆինանսատնտեսական վերլուծությունը էներգետիկայի հանձնաժողովի կարևորագույն խնդիրներից մեկն է, քանի որ հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկությունների հիման վրա գնահատել համակարգի ֆինանսատնտեսական իրավիճակը և լիցենզավորված գործունեության արդյունավետությունը: Ֆինանսատնտեսական վերլուծության նպատակներն են՝

- Սակագների վերանայման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ցուցանիշների գնահատումը,
- Լիցենզիա ստանալու հայտով հանձնաժողով դիմած ընկերությունների կանխատեսվող ֆինանսատնտեսական ցուցանիշների գնահատումը և վերլուծությունը,
- Համակարգի ընկերությունների գործունեության արդյունքների հիման վրա համակարգի ֆինանսական վիճակի գնահատումը և, անհրաժեշտության դեպքում, առողջացմանն ուղղված առաջարկությունների մշակումը,
- Լիցենզավորված անձանց ֆինանսատնտեսական ցուցանիշների վիճակագրական բազայի ստեղծումը:


Ներկայացնենք էներգետիկայի բնագավառի ընկերությունների 1999 թվականի գործունեության արդյունքների համառոտ վերլուծությունը:

1999թ. ընթացքում հանրապետությունում արտադրվել է 5716 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որից արտադրող կայաններում սեփական կարիքների համար օգտագործվել է 400 մլն կՎտժ (կամ 7,0%): Ազգային ցանց մուտք է գործել 5778,4 մլն կՎտժ էլեկտրաէներգիա (արժեքային արտահայտությամբ՝ 75,8 մլրդ դրամի) ներառյալ ներմուծված էլեկտրաէներգիայի քանակը՝ 462,5 մլն կՎտժ (հավելված 4): Բարձր լարման ցանցերում տեխնոլոգիական կորուստները կազմել են 339,5 մլն կՎտժ (կամ 5,88%): «Հայէներգո» ՓԲԸ-ի կայաններից էլեկտրաէներգիայի գնման փաստացի միջին սակագինը կազմել է 13,11 դրամ/կՎտժ՝ հանձնաժողովի կողմից սահմանված 12,23 դրամ/կՎտժ-ի դիմաց: Կայաններից առաքված էլեկտրաէներգիայի վաճառքի միջին սակագնի բարձրացումը պայմանավորված է եղել էլեկտրաէներգիայի արտադրության փաստացի և սակագնի սահմանման հիմքում դրված կառուցվածքների զգալի տարբերությամբ: ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի որոշմամբ հաստատված 1999 թվականի քվտանների հիմքում դրված էր գիշերային նվազագույն բեռի աճի հաշվին էլեկտրաէներգիայի սպառման գրաֆիկների օպտիմալացումը (հարթեցումը), ինչը պետք է հանգեցներ ՀԱԷԿ-ի հզորությունների օպտիմալ օգտագործմանը: Առաջնահերթ խնդիրներից էր նաև ՀՀ ջրային պաշարների առավելագույն օգտագործումը, որի


արդյունքում պետք է նվազեր օրգանական վառելիքով աշխատող ջերմային կայանների արտադրանքը:

Ստորև ներկայացվում են էլեկտրաէներգիայի արտադրության սակագների սահմանման հիմքում դրված և փաստացի արտադրության կառուցվածքները՝ 1999 թվականի համար.

*Սակագնի սահմանման հիմքում դրված առաքված էլեկտրական էներգիայի կառուցվածքը*



*Փաստացի առաքված էլեկտրական էներգիայի կառուցվածքը*



Որոտանի ՀԷԿ-ի կողմից էլեկտրաէներգիայի առաքման ծավալների նվազումը պայմանավորված էր 1999 թվականին հիդրոլոգիական անբարենպաստ պայմաններով, իսկ Սևան-Հրազդանյան ՀԷԿ-ում՝ ջրային սահմանափակումներով: ՀԱԷԿ-ից առաքման ծավալների նվազումը պայմանավորված էր միջուկային վառելիքի մատակարարման ձգձգմամբ, դրա հետևանքով պլանային նորոգման ժամկետի երկարաձգմամբ, ինչպես նաև կանխատեսված սպառման բեռի գրաֆիկից շեղմամբ:

Էլեկտրական էներգիայի արտադրության կառուցվածքի փոփոխության հետևանքով «Հայէներգո» ՓԲԸ-ում առաջացել է հաշվեգրված վնաս, իսկ արտադրող կայաններում՝ Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երում, արտադրության ծավալների ավելացման շնորհիվ առաջացել է հաշվեգրված գերշահույթ:

«Հայէներգո» ՓԲԸ-ի կողմից բաշխիչ ցանցերին է առաքվել 4719 մլն կՎտժ կամ դրամային արտահայտությամբ 70,4 մլրդ դրամի էլեկտրաէներգիա, իսկ այլ երկրներ է արտահանվել 703,6 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Համեմատության համար նշենք, որ 1998 թվականի ընթացքում բաշխող ցանցերի կողմից գնվել է 5038,2 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, այսինքն՝ 1999 թվականին նախորդ տարվա համեմատությամբ այն պակասել է շուրջ 320 մլն կՎտժ-ով:

Բաշխող ընկերությունների կողմից սպառողներին առաքված էլեկտրական էներգիայի իրական ծավալը կազմել է 4214,97 մլն կՎտժ, որը «Հայէներգո» ՓԲԸ-ից գնված էլեկտրաէներգիայի քանակն է (4719,0 մլն կՎտժ)՝ հանած տեխնոլոգիապես

անխուսափելի (նորմատիվային) կորուստները (504,03 մլն կՎտժ): Ելնելով սպառողներին էլեկտրաէներգիայի վաճառքի փաստացի միջին սակագնից (21,64 դրամ/կՎտժ)՝ սպառված էլեկտրաէներգիայի արժեքը կազմել է 91,2 մլրդ դրամ (ներառյալ ԱԱՀ): Սպառողներին առաքված էլեկտրաէներգիայի վերը նշված ծավալից հաշվեգրվել է 3628,2 մլն կՎտժ կամ 78,5 մլրդ դրամի էլեկտրաէներգիա: Բաշխող ցանցերում փաստացի կորուստները կազմել են 1090,8 մլն կՎտժ կամ «Հայէներգո» ՓԲԸ-ի մուտքի նկատմամբ 23,1 %, ընդ որում, ինչպես արդեն նշվել է, տեխնոլոգիապես անխուսափելի (նորմատիվային) կորուստները բաշխող ցանցերում կազմել են 504,03 մլն կՎտժ կամ 10,7 %, իսկ գերնորմատիվային կորուստները՝ 586,67 մլն կՎտժ կամ 12,4%:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց փաստացի գանձումները 1999 թվականի ընթացքում կազմել են 69,3 մլրդ դրամ (առանց խմելու ջրի, ոռոգման ջրի և այլ ձեռնարկությունների նախորդ տարիների պարտքերի դիմաց կատարված հաշվանցումների), որը կազմում է հաշվեգրված էլեկտրաէներգիայի դիմաց սպասվող հասույթի 88,3%-ը կամ իրականում սպառողներին առաքված էլեկտրաէներգիայի դիմաց սպասվող հասույթի 75,9%-ը:


Այսպիսով, չվճարումների և գերնորմատիվային կորուստների պատճառով բաշխող ընկերությունները, իսկ որպես հետևանք՝ նաև ողջ համակարգը, չեն ստացել մոտ 21,9 մլրդ դրամ հասույթ, որից չվճարումները կազմել են 9.2 մլրդ դրամ, գերնորմատիվային կորուստները՝ 12.7 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ բաշխող ցանցերում չվճարման և գերկորուստների պատճառով անհրաժեշտ հասույթի չստացումը ազդել է համակարգի ընկերությունների գործունեության վրա:


Ստորև ներկայացվում են էլեկտրաէներգետիկայի համակարգի ընկերությունների շահագործման և պահպանման ծախսերի (հավելված 5) սակագնով սահմանված և փաստացի հաշվեգրված կառուցվածքները՝ 1999 թվականի համար.

### *Սակագնով սահմանված շահագործման և պահպանման ծախսերի*

## Կառուցվածքը



Ընկերությունների կողմից փաստացի հաշվեգրված շահագործման և պահպանման ծախսերի կառուցվածքը.





Մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գերկորուստների և չվճարումների պատճառով չկատարված ծախսերը հիմնականում բաժին են ընկել նորոգման և նյութական ծախսերին, որոնք ընդհանուր առմամբ թերակատարվել են 22,6 մլրդ դրամով: Պարզ է, որ նշված ծախսերի կատարման նման պատկերն արդեն իսկ անդրադառնում է էլեկտրաէներգիայի հուսալի և անվտանգ արտադրման, հաղորդման ու բաշխման ապահովման վրա: Իրավիճակի շտկմանն ուղղված գործողությունների հետաձգումը ծանր հետևանքներ կունենա էներգետիկայի բնագավառի և ընդհանրապես, հանրապետության ամբողջ տնտեսության համար:

Այսպիսով, բաշխիչ ցանցերում գերնորմատիվային կորուստների և չվճարումների վերացումը անհետաձգելի խնդիր է: Միաժամանակ հասկանալի է, որ նշված հարցի լուծման համար անհրաժեշտ է պատկառելի ներդրումներ կատարել բաշխող ցանցերում և արմատապես բարելավել կառավարման մակարդակը:

Հաջորդ կարևոր հարցը վերաբերում է տարեցտարի աճող դեֆիտորական և կրեդիտորական պարտքերին: Բաշխող ցանցերի դեֆիտորական պարտքերն առաջացել են 1992-99 թվականներին էլեկտրաէներգիա սպառողների՝ հիմնականում բնակչության, բյուջետային կազմակերպությունների, ոռոգման և խմելու ջրի համակարգերի, պետական արդյունաբերական ձեռնարկությունների կողմից մշտական բնույթ կրող չվճարումների հետևանքով: Դեֆիտորական պարտքերն առաջացել են նաև այն պատճառով, որ որոշ սպառողների՝ մասնավորապես պղնձամոլիբդենային կոմբինատներին, տրվել են վճարման հետաձգման արտոնություններ:

Չորս բաշխող ցանցերի դեֆիտորական պարտքերը 2000 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են 68,6 մլրդ դրամ, որից գույքագրված (հաշվառված) պարտքերը կազմել են 47.5 մլրդ դրամ (էլեկտրաէներգիայի սպառողների պարտքերը՝ 42.7 մլրդ դրամ):

Դեֆիտորական պարտքերը մշտապես աճելու միտում կունենան, քանի դեռ չի ապահովվել բաշխող ցանցերի կողմից գնված էլեկտրաէներգիայի դիմաց 100% վճարումը:

Բաշխող ցանցերում գոյություն ունեցող թերզանձումների և գերկորուստների պատճառով համակարգի մյուս օղակների նկատմամբ պարտավորությունների չկատարումը փոխադարձ պարտքերի շղթա է առաջացրել էլեկտրաէներգիա բաշխող ցանցեր - «Հայէներգո»ՓԲԸ - ԲԷՑ - արտադրող կայաններ - բնական գազ մատակարարող ձեռնարկություններ ամբողջ համակարգում:

Էլեկտրաէներգիա բաշխող չորս ընկերությունների մասնավորեցման մասին օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ցանցերի կրեդիտորական պարտքերից աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումները, սոցիալական ապահովագրության և ապահովության վճարները, սպառողների կողմից էլեկտրաէներգիայի դիմաց կատարված կանխավճարները, վարկային և բյուջեի հանդեպ պարտավորությունները փոխանցվելու են էլեկտրաէներգիա բաշխող նոր ընկերություններին: Իսկ մնացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերը փոխանցվում են էներգահամակարգի այլ ընկերությունների: Այժմ քննարկման փուլում է գտնվում ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով պետք է ապահովվի մասնավորեցման մասին նշված օրենքի 10-րդ հոդվածի կատարումը:

Էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման գործընթացն ապահովվելու և ամբողջ էներգահամակարգի առողջացմանը նպաստելու նպատակով որոշման նախագծով նախատեսվում է կատարել համակարգի ընկերությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերակառուցում և սպասարկում:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերակառուցումը, չորս ընկերությունների սեփականաշնորհումը և դրա արդյունքում ցանցերի կողմից «Հայէներգո» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների 100% կատարումը (համաձայն օրենքի) կարող են բեկումնային լինել ողջ համակարգի ֆինանսական առողջացման համար: Այս խնդրի լուծումը էապես կխթանի նաև մասնավոր ներդրումների հոսքը էլեկտրաէներգիայի արտադրության բնագավառ, այդ թվում՝ փոքր ՀԷԿ-երի կառուցման:

Համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 26-ի N 740 որոշման, 2000 թվականից էներգահամակարգի խոշոր ընկերությունների հաշվապահական հաշվառումը տարվում է ՀՀ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներով (ՀՀ ՀՀՍ): Ելնելով նշվածից, էներգետիկայի հանձնաժողովը 2000 թվականի մարտի 24-ի N 7 որոշմամբ հաստատել է ֆինանսական հաշվետվության նոր ձևեր, որոնք

համապատասխանում են ՀՀ ՀՀՍ-ին: Նույն որոշմամբ հաստատվել են նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ու վերլուծության կարգը և ֆինանսական հաշվետվության ձևերի լրացման հրահանգը:

Հանձնաժողովում շարունակվում են ֆինանսական հաշվետվության ձևերի կատարելագործման աշխատանքները: Մշակման փուլում են գտնվում ֆինանսական վերլուծության նոր մեթոդաբանության և մեթոդիկայի մշակման ու ներդրման աշխատանքները: Անհրաժեշտ է հանձնաժողովի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական վերլուծությունը առավել նպատակաուղղել սակագների սահմանման, լիցենզավորման և լիցենզիայի պայմանների վերահսկման գործառույթների իրականացմանը: Այս առումով նախատեսվում է անկախ փորձագետների ներգրավմամբ կատարել հետևյալ աշխատանքները.

- էներգետիկայի բնագավառի ընկերությունների ֆինանսատնտեսական վերլուծության մեթոդաբանության բարելավում,
- լիցենզավորված անձանց ֆինանսատնտեսական ցուցանիշների վիճակագրական բազայի մշակում,
- Ֆինանսական հաշվետվության ձևերի կատարելագործում՝ համաձայն ՀՀ ՀՀՍ-ի պահանջների,

Ներկայումս ֆինանսատնտեսական վերլուծության ընթացքում հանդիպող հիմնական դժվարությունը պայմանավորված է ընկերությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելով և դրանցում պարունակվող տեղեկատվության ցածր որակով: Ֆինանսական հաշվետվությունների՝ ժամանակին և որակով ներկայացումն ապահովելու նպատակով մշակվում են և կներդրվեն նոր մեխանիզմներ, որոնք կպարտադրեն ընկերություններին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն ներկայացնել: Հաշվետվություններում ներկայացվող ֆինանսական տեղեկատվությունների որակը բարձրացնելու համար, միաժամանակ, կշարունակվի հետևողական աշխատանքը ընկերությունների համապատասխան մասնագետների գիտելիքների բարձրացման ուղղությամբ: Նրանց համար կկազմակերպվեն հատուկ դասընթացներ, որոնցում կպարզաբանվեն հարկային կամ այլ մարմիններ և հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների սկզբունքային առանձնահատկությունները: Հիշյալ ձեռնարկումն իրականացնելիս հաշվի է առնվում այլ երկրների կարգավորող մարմինների փորձը միջազգային

Ֆինանսական ստանդարտների հիման վրա հաշվետվությունների մշակման և վերլուծության բնագավառում:

## **6. Հասարակայնության և սպառողների հետ տարվող աշխատանքներ**

Հանձնաժողովն իր գործունեության կարևորագույն ուղղություններից է համարում հասարակական համաձայնության ինստիտուտի հաստատումն ու հետագա կատարելագործումը, ենթադրում է ավելի ակտիվ աշխատանք հասարակական կազմակերպությունների, լրատվական միջոցների և սպառողների տարբեր միավորումների հետ: Հանձնաժողովի աշխատանքներն այսօր էլ հրապարակային են, նիստերը՝ դռնբաց, սակայն դա բավարար չէ: Հանձնաժողովը պետք է նախաձեռնի հասարակական լուրջ արձագանք ունեցող խնդիրների լայնորեն քննարկումը հասարակության տարբեր խմբերի հետ, որից հետո միայն, հաշվի առնելով նաև հասարակական կարծիքը, ընդունի համապատասխան որոշումներ:

Սպառողների շահերի պաշտպանությունը, նրանց շրջանում տարվող բացատրական աշխատանքը, հարցադրումներին, դիմում-բողոքներին, ահազանգերին անհրաժեշտ լուծումներ տալու ուղղությամբ տարվող աշխատանքները ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում են:

Հանձնաժողովում գործող հրատապ հեռախոսի միջոցով հնարավորություն է ընձեռվել մասամբ կապ պահպանել ինչպես մայրաքաղաքի, այնպես և մարզերի սպառողների հետ: Հատուկ կարևորելով սպառողների իրազեկման խնդիրը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում «Հրատապ հեռախոս» վերտառությամբ տեղեկատվություն է հրապարակվել հանձնաժողովում գործող սպառողների դիմում-բողոքների ծառայության մասին: Այդ մասին առանձին հաղորդում է տրվել նաև ազգային ռադիոյով:

1999 թվականի հոկտեմբերի 1-ից առ այսօր ՀՀ էներգետիկայի հանձնաժողովում ստացվել են ավելի քան 144 հարցադրում, դիմում-բողոք, որոնցից 129-ը՝ բնակչությունից, 15-ը՝ իրավաբանական անձանցից: Դրանցում բարձրացված հարցերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեծ մասի խնդրո առարկան էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրումն է, հաշվառքի սարքերի ցուցմունքների սխալ մեկնաբանումը, մատակարարողի կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ

կատարումը: Բոլոր հարցադրումները և դիմում-բողոքները սահմանված կարգով քննարկվել են՝ ստանալով համապատասխան լուծումներ:

Սպառողների հարցադրումներում, դիմում-բողոքներում բարձրացված խնդիրները օպերատիվ կերպով կարգավորելու նպատակով հանձնաժողովը սերտորեն համագործակցում է բաշխող ընկերությունների, համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով, կարևորվում են հանձնաժողովի աշխատանքների մասին պարբերական տեղեկատվության ապահովումը, հանրության իրազեկումը:

Ազգային ռադիոյով բազմիցս հեռարձակվել են հաղորդումներ՝ հանձնաժողովի փոխնախագահի, անդամների, վարչությունների պետերի մասնակցությամբ, որոնց ընթացքում պարզաբանվել են հանձնաժողովի կարգավորիչ գործունեության մանրամասները: Առանձին հաղորդումներ են տրվել էլեկտրաէներգիայի բաշխող ցանցերի մասնավորեցման թեմայով: Հաշվի առնելով հասարակական մեծ հետաքրքրությունը այս ձեռնարկման նկատմամբ, նախատեսվում է շարունակել այդ շրջանակներում իրականացվող աշխատանքների լուսաբանումը զանգվածային լրատվական միջոցներով:

Էներգետիկայի համակարգի խնդիրների և, հատկապես, բաշխող ցանցերի մասնավորեցմանն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ ազգային հեռուստատեսությամբ և մասնավոր հեռուստաընկերություններով ելույթներ են ունեցել հանձնաժողովի նախագահը, փոխնախագահը, իրավաբանական և լիցենզիոն մոնիթորինգի վարչության պետը:

Էներգետիկայի ոլորտի կարգավորմանը, մեթոդաբանությանը, էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցմանն առնչվող բոլոր հարցերի շուրջ շահագրգիռ քննարկումներ ծավալելու պաշտոնական առաջարկով հանձնաժողովը դիմել է ԱԺ խմբերին և խմբակցություններին:

Սույն թվականի մարտի 10-ին Ազգային ժողովում «Իրավունք և միաբանություն» խորհրդարանական խմբակցության հետ կայացել է համատեղ քննարկում՝ բաշխող ցանցերի մասնավորեցման վերաբերյալ: Հանձնաժողովի նախագահը և

փոխնախագահը մասնակցել են նույն թեմայի շուրջ ԱԺՄ կուսակցության կողմից կազմակերպված քննարկմանը:

Երևանի մամուլի ակումբի հրավերով անցկացվել է մամլո ասուլիս, որի ընթացքում հանձնաժողովի նախագահը լրագրողներին հանգամանալից պարզաբանումներ է տվել բաշխող էլեկտրացանցերի մասնավորեցման, առաջիկա տարիների սակագնային քաղաքականության, սպառողների շահերի պաշտպանության և, ընդհանրապես, հանձնաժողովի կարգավորիչ դերի մասին:

Հայաստանի ազգային հեռուստատեսությամբ հեռարձակվող «Կապիտալ» հաղորդաշարով հանձնաժողովի նախագահի, անդամների, աշխատակազմի աշխատակիցների կողմից հանրությանը մատչելի ձևով ներկայացվել են հանձնաժողովի իրավաբանական և լիցենզիոն մոնիթորինգի, սակագնային քաղաքականության, սպառողների շահերի պաշտպանության գործառույթները:

Ներկայացնելով քարոզչության և լրատվության ասպարեզում կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը, պետք է նշել, որ արվածը միայն սկիզբն է այն ծավալուն և բազմաբովանդակ ծրագրերի, որոնք պետք է ապահովեն էներգետիկայի հանձնաժողովի աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

Հանձնաժողովը կարևորում է արդյունավետ համագործակցությունը պետական լրատվամիջոցների հետ՝ ակնկալելով անվճար հեռուստառադիո ժամեր, օպերատիվ լրատվության հրապարակում պետական պաշտոնաթերթերում:

Բաշխող էլեկտրացանցերի մասնավորեցմանը նախորդող ժամանակահատվածում անհրաժեշտ ենք համարում ապահովել հանձնաժողովում մշակվող նորմատիվային փաստաթղթերի հրապարակումը լրատվական միջոցներում, որոնք ներառվելու են ՀՀ կառավարության և ռազմավարական ներդրողների ապագա բանակցությունների անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթում:

Կարևորելով սպառողների շահերի պաշտպանությունը՝ հեռուստատեսությամբ, ռադիոյով կազմակերպվել են հաղորդումներ, որոնց ընթացքում պարզաբանվել են մատակարար-սպառող փոխհարաբերությունները կարգավորող պայմանագրի որոշ կետեր, հանձնաժողովին ուղղված հարցադրումների, դիմում-բողոքների քննարկման կարգը:

Զգալի առաջընթաց կա հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներում: Նշված կազմակերպությունների հետ ծավալվել է

արդյունավետ համագործակցություն , մշակվել են միջոցառումների համատեղ ծրագրեր:

Հայաստանի սպառողների միության հրավերով հանձնաժողովի փոխնախագահը մասնակցել է սպառողների հետ մի շարք հանդիպումների, որոնց ընթացքում պարզաբանումներ են տրվել սակագների սահմանմանը, սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող խնդիրներին: Հասարակական կազմակերպությունների հրավերով հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են նրանց արտագնա նիստերին: Հանդիպումների արդյունքները հանգամանորեն ուսումնասիրվել են հանձնաժողովում, նշվել են ծրագրային անելիքները:

Ելնելով վերը շարադրվածից, անհրաժեշտ ենք համարում առաջիկայում մեծ տեղ հատկացնել սպառողների կրթական ծրագրերի իրականացմանը, (հանրամատչելի գրքույկների, հիշեցումների հրատարակում, բացատրական-ուսուցողական աշխատանքների իրականացում մարզերի բնակչության հետ): Այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ են բավականաչափ լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

Հանձնաժողովը շարունակելու է սերտորեն համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ, հրավիրել նրանց հանձնաժողովի այն նիստերին, որտեղ քննարկվում են սպառողների շահերին վերաբերող հարցեր, տրամադրել էլեկտրաէներգիայի, գազի օգտագործման օրինակելի պայմանագրերի նոր տարբերակները՝ իրենց կազմակերպություններում քննարկելու համար: Արված դիտողություններն ու առաջարկությունները կուսումնասիրվեն և հաշվի կառնվեն:

Նյութական և տեխնիկական միջոցների առկայության դեպքում հնարավոր կլինի առաջիկայում պատրաստել և հեռուստատեսությամբ եթեր հեռարձակել սեփական լրատվությունը, մշտական անվճար հեռախոսային կապ հաստատել մարզերի բնակչության հետ, ինչպես նաև հանձնաժողովի մասնագետներին գործուղել մարզեր՝ տեղերում սպառողների ու մատակարարների հետ հանդիպելու, սպառողների նկատմամբ մատակարարների պարտավորությունների լիարժեք կատարման վիճակն ուսումնասիրելու և բարձրացված հարցերին օպերատիվ լուծում տալու նպատակով:

Սպառողների իրազեկության մակարդակը բարձրացնելու, նրանց իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով նախատեսվում է ակտիվացնել համագործակցությունը հասարակական կազմակերպությունների մարզային կառույցների հետ:

## **7. Էներգետիկական շուկայի զարգացումը**

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով ամրագրված կարևորագույն խնդիրներից մեկը էներգետիկայի բնագավառում շուկայական հարաբերությունների զարգացումն է:

Հանձնաժողովը գտնում է, որ հանրապետության էլեկտրաէներգետիկայի ոլորտում շուկայական հարաբերություններին համապատասխանող կառուցվածքի և առևտրային հարաբերությունների աստիճանական ներդրումն ու հետագա կատարելագործումը էլեկտրաէներգետիկ համակարգի պահպանման, արդյունավետ զարգացման և սպառողներին հուսալի, անվտանգ և որակյալ էլեկտրամատակարարման ապահովման միակ արդյունավետ քաղաքականությունն է, որը նպատակաուղղված է.

- ա) էներգետիկ ընկերությունների՝ որպես առևտրային կառույցների, ֆինանսատնտեսական արդյունավետության և գործունեության թափանցիկության ապահովմանը.
- բ) գործող էներգետիկ ընկերությունների մասնավորեցման խթանմանը և դրա արդյունքում՝ մասնավոր ներդրումների ապահովմանը.
- գ) ներքին և տարածաշրջանային շուկաներում էլեկտրաէներգիայի արտադրության մրցակցային հարաբերությունների աստիճանական անցմանը, որի արդյունքում կապահովվի էլեկտրաէներգիայի արդյունավետ արտադրություն՝ մրցակցությամբ ձևավորվող ցածր սակագներով:
- դ) ընկերությունների գործունեությանը պետության վարչական միջամտության աստիճանական նվազեցմանը:

Միաժամանակ գտնում ենք, որ մրցակցային շուկայական կառուցվածքների, հարաբերությունների ու մեխանիզմների ներդրումը պետք է իրականացվի պլանավորված ու աստիճանաբար՝ նպատակ ունենալով ապահովել հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման կայունությունը և հնարավորություն տալ սպառողներին վերակառուցելու իրենց էներգասպառման քաղաքականությունը: Հանձնաժողովի կարծիքով, անցումային շրջանի՝ առաջիկա 3-5 տարվա համար պետական քաղաքականության մարտավարությունը մշակելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ գործոնները.



ա) Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրության և ներմուծման ոլորտում իրական շուկայական մրցակցության համար անհրաժեշտ նախադրյալներ օբյեկտիվորեն չեն կարող լինել, ուստի ներքին սպառման համար էլեկտրաէներգիայի արտադրության սակագները պետք է մնան կարգավորվող.

բ) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում պետք է պահպանվի բնակչության համար միատեսակ սակագների սահմանման սկզբունքը.

գ) բաշխող ընկերություններին պետք է տրամադրվի (լիցենզիայով ամրագրված աշխարհագրական տարածքում) էլեկտրաէներգիայի վաճառքի բացառիկ իրավունք, այսինքն՝ պետք է բացառել արտադրող-խոշոր սպառող ուղղակի պայմանագրերի կնքման հնարավորությունը, նպատակ ունենալով թույլ չտալ բնակչության սակագնային բեռի ավելացում՝ ընկերությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ հասույթ ապահովելու նկատառումով:

Հաշվի առնելով անցումային շրջանի վերոհիշյալ խնդիրները, հանձնաժողովը առաջարկում է էլեկտրաէներգետիկայի համակարգում շուկայի կառուցվածքի և շուկայական հարաբերությունների հետևյալ սկզբնական մոդելի ներդրումը.

ա) շուկայի հնարավոր մասնակիցները (այդ թվում՝ կենտրոնական կարգավորական ծառայությունը (ԿԿԾ) և, ըստ ցանկության, խոշոր սպառողները) հիմնում են էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների ոչ առևտրային միություն, որին լիազորում են՝

- շուկայական հարաբերությունները կանոնակարգող իրավական փաստաթղթի՝ «Ցանցային կողեքսի» մշակումը, փոխհամաձայնեցումը և ներկայացումը հանձնաժողովի հաստատմանը.
- շուկայի ֆինանսական և տեխնիկական գործունեության հսկողությունը, շուկայի մասնակիցների միջև վեճերի քննարկումը:

բ) «Հայէներգո» ՓԲԸ-ի կազմում ստեղծվում են երեք ստորաբաժանումներ, որոնք իրականացնում են շուկայի սպասարկման հետևյալ գործառնությունները.

- Շուկայի կենտրոնական մեծածախ գնորդ-վաճառող, որին տրվում է բացառիկ իրավունք՝ իրականացնելու ներքին սպառման համար էլեկտրաէներգիայի մեծածախ գնում և վաճառք բաշխող ընկերություններին:
- Կենտրոնական կարգավարական ծառայություն, որին տրվում է բացառիկ իրավունք՝ իրականացնելու էներգահամակարգի կարգավարում և «Ցանցային կողեքսով» ու լիցենզիայով սահմանված այլ լիազորություններ:
- Հաշվարկային կենտրոն, որը «Ցանցային կողեքսով» սահմանված կարգով իրականացնում է շուկայի մասնակիցների միջև էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի քանակի, ինչպես նաև շուկայի ընդհանրական մատուցած ծառայությունների հաշվառումը: Հաշվարկային կենտրոնը կատարում է վաճառված (գնված) էլեկտրական էներգիայի (հզորության) քանակի, հաշվարկային և իրական կորուստների հաշվառում և շուկայի մասնակից բոլոր սուբյեկտների հետ կազմում փոխադարձ ակտեր:

գ) Ներկայումս «Հայէներգո» ՓԲԸ-ի կազմում գտնվող՝

- ՁորաՀԷԿ-ը պետք է հանվի «Հայէներգո»-ի կազմից, դառնա առանձին ՓԲԸ և մասնավորեցվի՝ օրենքով սահմանված կարգով.
- «Հայէներգակարգաբերում» մասնաձյուղը պետք է առանձնացվի որպես առանձին ՓԲԸ, որը պայմանագրային հիմունքներով պետք է ծառայություններ մատուցի շուկայի մասնակիցներին և այլ անձանց.
- «Էներգակապ» մասնաձյուղը, որն այսօր ապահովում է «Հայէներգո»-ի անհրաժեշտ կարգավարական կապը և միաժամանակ կապի ծառայություններ մատուցում էներգահամակարգի տնտեսավարող սուբյեկտներին, պետք է վերակազմավորվի որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտ:

Շուկայի մասնակիցների և մեծածախ գնորդ-վաճառողի միջև ֆինանսական հոսքերը իրականացվում են մրցույթով ընտրված բանկի («Ֆոնդերի ադմինիստրատոր») միջոցով, որի ընթացիկ կառավարումն իրականացնում է «Հայէներգո» ՓԲԸ-ի մեծածախ գնորդ-վաճառողը՝ շուկայի մասնակիցների միության

հետ կնքված բազմակողմանի պայմանագրերով և «Ցանցային կողեքսով» սահմանված կարգով: «Ֆոնդերի ադմինիստրատորի» հաստատուն ծախսերը հաշվի են առնվում մեծածախ գնորդ-վաճառողի ծառայությունների մատուցման սակագնում:

Շուկայական բարեփոխումների երկրորդ փուլում շուկայի կառուցվածքի և կիրառվող կարգավորման մեխանիզմների կատարելագործման միջոցով աստիճանական անցում կկատարվի մրցակցային ազգային շուկային՝ ինտեգրելով այն տարածաշրջանային շուկային: Դրա իրականացման համար առաջարկվում է՝

1) Սակագնային քաղաքականության կատարելագործում հետևյալ ուղղություններով.

ա) վերջնական սպառողների կարգավորվող սակագների համապատասխանեցում մատակարարման ծախսերին և խաչաձև սուբսիդիաների աստիճանական նվազեցում.

բ) խոշոր սպառողների համար երկդրույք կարգավորվող սակագների (հզորություն և էներգիա) սահմանում և կիրառում.

գ) այլ սպառողների համար «միացման վճարի» և (կամ) «բաժանորդային վճարի» սահմանում և կիրառում:

2) Արտադրող-բաշխող, արտադրող-սպառող, ներմուծող-սպառող ուղղակի պայմանագրերի աստիճանական կիրառում: Այս ընթացքում, նախ, կազատականացվեն ջերմային կայանների, այնուհետև՝ ատոմակայանի ու հիդրոկայանների էլեկտրաէներգիայի (հզորության) սակագները՝ նախադրյալներ ստեղծելով մրցակցային շուկայի համար:

3) Էներգետիկական շուկայի զարգացման երկրորդ փուլում համապատասխանաբար կվերակազմավորվեն նաև շուկային կենտրոնացված ծառայություններ մատուցող կառույցները (ԿԿԾ, մեծածախ գնորդ-վաճառող, հաշվարկային կենտրոն):

4) Ենթադրվում է, որ երկրորդ փուլում կմասնավորեցվեն ՋԷԿ-երը, հետո նաև ՀԷԿ-երը: Ավելի հավանական է ՀԷԿ-երի հանձնումը երկարաժամկետ լիազորագրային կառավարման ներդրումներ իրականացնելու պարտադիր պայմանով:

5) Տարածաշրջանում քաղաքական և միջպետական հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված՝ երկրորդ փուլում նախադրյալներ կստեղծվեն տարածաշրջանային մրցակցային շուկայի կազմավորման և գործունեության համար:

Հանձնաժողովը էլեկտրաէներգետիկական շուկայի ներդրման ապահովման համար 2000-2001 թվականներին պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

ա) «Ցանցային կողեքսի» մշակման առաջին փուլում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը, ՀՀ էներգետիկայի նախարարությունը և շուկայի մասնակիցները համատեղ պետք է մշակեն և հաստատեն «Ցանցային կողեքսի» հենքը հանդիսացող էլեկտրահամակարգում առևտրային հարաբերությունների ու տեխնոլոգիական կառավարման հիմնական սկզբունքը: Բուն «Ցանցային կողեքսը» որպես վերջնական փաստաթուղթ, պետք է մշակվի էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների միության կողմից և հաստատվի հանձնաժողովի կողմից:

բ) Հանձնաժողովը պետք է մշակի շուկայի մասնակիցների առևտրային հարաբերությունները կանոնակարգող նոր օրինակելի պայմանագրերի ձևեր, քանի որ շուկայի ներդրման դեպքում համապատասխան փոփոխություններ են կրում նաև փոխհարաբերությունները:

գ) Արտադրող կայանների պատասխանատվությունը և ֆինանսական շահագրգռվածությունը բարձրացնելու համար ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը պետք է մշակի և 2001 թվականից ներդնի արտադրող կայանների էլեկտրաէներգիայի գնման երկդրույք համակարգ՝ էլեկտրաէներգիայի և հզորության համար, սահմանելով առանձին սակագներ:

Շուկայական հարաբերությունների ներդրումը և կատարելագործումը շարունակական գործընթացներ են, որոնք պետք է կարգավորվեն հանձնաժողովի կողմից:

## **8. Հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը**

Էներգետիկայի բնագավառում սեփականաշնորհման գործընթացի ծավալվելուն համընթաց, կսահմանափակվեն սեփականաշնորհված ձեռնարկությունների տնտեսական գործունեության վրա պետական կառավարման մարմինների ուղղակի ներգործության հնարավորությունները: Այս պայմաններում է՛լ ավելի կբարձրանա հանձնաժողովի դերը, որն իրավասու է օրենքով իրեն վերապահված լծակներով (ծառայությունների սակագներ, լիցենզիայի պայմաններ, ֆինանսատնտեսական հաշվետվություններ և այլն) կարգավորել և վերահսկել բնական մենաշնորհ հանդիսացող ոլորտի սուբյեկտների գործունեությունը՝ անկախ սեփականության ձևից:

Պարզ է, որ հանձնաժողովի առջև դրված բոլոր խնդիրների լիարժեք լուծման համար անհրաժեշտ են համապատասխան ֆինանսական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ:

Հաշվի առնելով մի շարք երկրների փորձը և նպատակ ունենալով ապահովել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի ֆինանսական ինքնուրույնությունը, նպատակահարմար ենք գտնում հանձնաժողովի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ձևավորել էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից սահմանված կարգով կատարվող մասհանումների հաշվին՝ դրանով իսկ, միաժամանակ, թեթևացնելով ՀՀ պետությունից բերը: Սկզբից ևեթ նշենք, որ ելնելով հանձնաժողովի համար վերջին տարիներին նախատեսվող բյուջետային հատկացումների ծավալներից, առավել ևս՝ փաստացի հատկացումների չափից և դրա հետագա աճի կանխատեսումից, յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարվող փոքրածավալ հատկացումները շոշափելի ազդեցություն չեն ունենա նրա տնտեսական գործունեության և առավել ևս՝ գործող սակագների վրա:

Ֆինանսական միջոցների առկայության դեպքում հնարավոր կլինի ընդլայնել հանձնաժողովի աշխատակազմը, ինչպես նաև հանձնաժողովի աշխատանքներում ներգրավել անկախ փորձագետների (հեղինակավոր գիտնականներ, մասնագետներ և մասնագիտական կազմակերպություններ), ինչը մեծապես կնպաստի հանձնաժողովի որոշումների հիմնավորվածության նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը, կծեկավորվեն նոր խնդիրներից բխող մասնագիտական առանձին ստորաբաժանումներ (մասնավորապես՝ տեխնիկական փորձաքննության,

կառավարման, աուդիտի կազմակերպման, հասարակայնության հետ կապերի), իսկ մարզերում կստեղծվեն ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի ստորաբաժանումներ, որոնք տեղերում կապահովեն սպառողների կողմից բարձրացվող հարցերի օպերատիվ լուծումը:

Հանձնաժողովի ֆինանսավորման խնդրի լուծման առաջարկված տարբերակը պահանջում է համապատասխան փոփոխություն կատարել «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ կադրերի ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ անցած երեք տարիների ընթացքում իրականացված աշխատանքի շնորհիվ ներկայումս հանձնաժողովում ձևավորվել է կարգավորման բնագավառի բարձրորակ մասնագետների կազմ, որոնք ունակ են միջազգային չափանիշներով լուծում տալ թե՛ էներգետիկայի բնագավառի և թե՛ բնական մենաշնորհի հանդիսացող հասարակական ծառայություններ մատուցող այլ ոլորտների կարգավորման բարդ խնդիրներին:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ հանձնաժողովը կազմավորելիս (1997 թվականին), նպատակ ունենալով ապահովել կարգավորող մարմնի բնականոն աշխատանքը, հանձնաժողովի անդամների և աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի սահմանման չափանիշ ընդունվեցին Կենտրոնական բանկի խորհրդի անդամների և աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի չափերը: Սակայն ներկայումս հանձնաժողովի աշխատավարձի չափերը շուրջ 2.5 անգամ պակաս են Կենտրոնական բանկի աշխատավարձի չափերից:

## **9. Համագործակցություն**

Էներգետիկայի բնագավառի կարգավորման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման, կարգավորման մասնագետների ուսուցման և վերապատրաստման

նպատակներով ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը համագործակցում է միջազգային կազմակերպությունների և մի շարք երկրների կարգավորող հանձնաժողովների հետ:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը մասնակցել է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) և Կոթույթամբ զարգացման ակադեմիայի (AED) կողմից բալթյան երկրներում և Լեհաստանում կազմակերպված տարածաշրջանային շուկայի ներդրման փորձի ուսումնասիրությանը նվիրված սեմինարին:

Հարևան երկրների հետ միասնական էներգահամակարգի ստեղծումը և տարածաշրջանում շուկայական հարաբերությունների ներդրումը հնարավորություն կընձեռեն Հայաստանի Հանրապետությանը բարձրացնելու Հայկական ԱԷԿ-ի և, ընդհանուր առմամբ, էներգահամակարգի անվտանգությունը, օգտագործելու արտադրող կայանների ներկայիս ավելցուկային հզորությունները այլ երկրների էլեկտրաէներգիա վաճառելու համար, ինչպես նաև այդ երկրներից տարվա որոշ ամիսներին ներմուծելու էժան էլեկտրաէներգիա: Տնտեսական զգալի շահավետությունից, սպառողներին հուսալի ու անվտանգ էլեկտրամատակարարումից, սակագների որոշ չափով իջեցման հնարավորությունից զատ, կստեղծվեն նաև տարածաշրջանում քաղաքական իրավիճակի կայունացմանը նպաստող լուրջ նախադրյալներ: Այդ տեսակետից ուշագրավ է արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ այն երկրների փորձը, որոնք, ունենալով Հայաստանին բնորոշ սակավ էներգապաշարներ և սպառման անկման պատճառով ավելցուկային արտադրող հզորություններ, տարածաշրջանային համագործակցության շնորհիվ կարողացել են հասնել զգալի հաջողությունների:

ՀՀ էներգետիկայի բնագավառում բարեփոխումների իրականացման, բաշխող ցանցերի սեփականաշնորհման, շուկայական հարաբերությունների ներդրման աշխատանքները հանձնաժողովը իրականացնում է՝ սերտորեն համագործակցելով ԱՄՆ-ի՝ մեծ փորձ ունեցող «Hagler Bailly» խորհրդատվական ընկերության հետ:

Շարունակվում և զարգանում է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի համագործակցությունը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի կարգավորող հանձնաժողովի հետ: Մասնավորապես, 2000 թվականի օգոստոս ամսին Երևանում կայացած սեմինարի ընթացքում նահանգի կարգավորման բնագավառի առաջատար մասնագետները մանրամասն ներկայացրեցին սակագների ձևավորման, մշակման, հաստատման, սպառողների սպասարկման, էներգամատակարարման որակի, անվտանգության

չափանիշների, սպառողների պաշտպանության, կրթման և իրազեկման հետ կապված մի շարք հարցեր: Նկատի ունենալով, որ բաշխող ցանցերի մասնավորեցումից հետո պետի է կարևորվելու սպառողների շահերի և իրավունքների պաշտպանության խնդիրը, հանձնաժողովի իրավերով սեմինարի աշխատանքին մասնակցում էին հանրապետության հասարակական (այդ թվում՝ սպառողների միության), քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հաշվի առնելով առաջիկայում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից լուծում պահանջող խնդիրների կարևորությունը, ԱՄՆ-ի էներգետիկայի ընկերակցության հետ համագործակցության ծրագիրը երկարաձգվել է մինչև 2002 թվականը: Նրանում հատուկ ուշադրություն պետք է դարձվի հետևյալ հարցերի պարզաբանմանը.

- էլեկտրական բաշխող ցանցերի մասնավորեցումից հետո նրանց գործունեության կարգավորման յուրահատկությունները,
- սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունը,
- էլեկտրական էներգիայի մատակարարման և սպառողների սպասարկման որակի հիմնական ցուցանիշների ընտրությունը, հիմնավորումը և վերահսկողությունը,
- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների ազդեցությունը սակագների վրա,
- մասնավորեցված ընկերությունների և պետական վերահսկողություն իրականացնող մարմինների փոխհարաբերությունները,
- կարգավորվող մարմնի և հասարակության, հասարակական կազմակերպությունների արդյունավետ համագործակցության կազմակերպումը և այլն:

Էներգետիկայի բնագավառի մասնավորեցման և էներգետիկական շուկայի ստեղծման գործընթացները կարգավորող մարմնի առջև նոր խնդիրներ են դնում, որոնց գերակշռող մասը շուկայական հարաբերությունների անցնող բոլոր երկրներում նույնն է: Այդ երկրների կարգավորող մարմինների համագործակցությունը և փորձի փոխանակումը հնարավորություն են ընձեռում զգալիորեն բարձրացնել ծառայած խնդիրների լուծման արդյունավետությունը: Այդ տեսակետից կարևոր է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության և Կարգավորող հանձնաժողովականների ազգային ընկերակցության (NARUC) հովանավորությամբ պարբերաբար անցկացվող խորհրդակցությունների դերը, որոնց մասնակցում են արևելյան և կենտրոնական



Եվրոպայի ու ԱՊՀ շուրջ 20 երկրների ներկայացուցիչներ: Խորհրդակցություններն անց են կացվում լիցենզիոն և սակագնային կոմիտեների շրջանակներում: Նիստերի օրակարգում ընդգրկվում են մասնակից երկրների կողմից նախապես բարձրացված ամենահրատապ հարցերը, որոնցից յուրաքանչյուրի լուծման վերաբերյալ մասնակիցների ներկայացրած կարծիքներն ու առաջարկությունները շահագրգիռ քննարկվում են նիստերում և ամփոփվում:

Էներգետիկայի հանձնաժողովի աշխատակազմի մասնագիտական որակի և նրա գործունեության արդյունավետության բարձրացմանը զգալի չափով նպաստում են ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության, Համաշխարհային բանկի և այլ կազմակերպությունների կողմից հովանավորվող դասընթացները, որոնք կշարունակվեն նաև հաջորդ տարվա ընթացքում:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2001թ. ՀԱՇՎԵԿՇՈՒ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հավելված 1

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	1999 թ. փաստացի	2000 թ. սպասվող	2001 թ. կանխատեսվող
1	Էլեկտրաէներգիայի արտադրություն	մլն.կվտժ	5716,0	5851,0	5945,2
	այդ թվում՝ ՀԱԷԿ	"-	2078,3	2185,0	2500,0
	ՀԷԿ-եր	"-	1199,3	1246,0	1283,2
	որից՝ Սևան-Հրազդանյան ՀԷԿ	"-	346,7	388,0	383,0
	Որոտանի ՀԷԿ	"-	727,6	730,0	770,0
	Չորա ՀԷԿ	"-	65,9	67,0	66,6
	Մասնավոր ՀԷԿ -եր	"-	59,1	61,0	63,6
	ԶԷԿ-եր	"-	2438,4	2420,0	2162,0
	որից՝ Հրազդանի ԶԷԿ	"-	1964,2	1970,0	1759,0
	Երևանի ԶԷԿ	"-	474,2	450,0	403,0
2	Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար	մլն.կվտժ	400,1	400,0	408,40
	Նույնը՝ %-ով	%	7,00%	6,84%	6,87%
3	Առաքում կայաններից	մլն.կվտժ	5315,9	5451,0	5536,8
4	Ներհոսք	"-	462,5	368,0	103,5
5	Ընդամենը բարձր լարման էլեկտրացանցեր	մուտք	"-	5778,4	5819,0
	Նույնը՝ %-ով 5-րդ տողի նկատմամբ	%	5,88%	5,72%	5,39%
6	Տեխնոլոգիական բարձր լարման էլեկտրացանցերում	կորուստները	"-	339,5	332,6
	Նույնը՝ %-ով 5-րդ տողի նկատմամբ	%	5,88%	5,72%	5,39%
7	Արտահոսք	մլն.կվտժ	703,6	715,0	456,0
8	Արտադրող կայանների տնտեսական կարիքներ	մլն.կվտժ	16,3	16,3	16,3
9	Առաքումը բաշխիչ ցանցեր	մլն.կվտժ	4719,0	4755,1	4864,0
10	Տեխնոլոգիական բաշխիչ ցանցերում	կորուստները	մլն.կվտժ	504,0	500,0
	Նույնը՝ %-ով 9-րդ տողի նկատմամբ	%	10,68%	10,51%	10,28%
11	Ներքին սպառում Այդ թվում՝	մլն.կվտժ	4215,0	4255,1	4364,0
	հաշվեգրված սպառում	մլն.կվտժ	3628,3	3640,13	4364,0
	Նույնը՝ %-ով 5-րդ տողի նկատմամբ	%	62,79%	62,56%	77,37%
	գերկորուստները բաշխիչ ցանցերում	մլն.կվտժ	586,7	615,0	
	Նույնը՝ %-ով 5-րդ տողի նկատմամբ	%	10,15%	10,57%	

**ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2001թ. ՀԱՇՎԵԿՇՈՒ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Հավելված 2

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	1999թ. փաստացի	2000թ. սպասվող	2001թ. կանխատեսվող
1	Ջերմային էներգիայի արտադրությունը, ընդամենը	<b>հազ.Պկալ</b>	<b>1004,1</b>	<b>1049,1</b>	<b>1463,8</b>
	այդ թվում՝ ՋԷԿ-երում	"-	572,5	674,1	928,5
	կաթսայատներում	"-	431,6	375,0	535,3
2	Տեխնոլոգիական ջերմային ցանցերում կորուստները	<b>հազ.Պկալ</b>	210,7	211,4	130,2
	Նույնը՝ %-ով	%	21,0%	20,2%	8,89%
3	Ջերմային էներգիայի օգտակար առաքումը այդ թվում՝	<b>հազ.Պկալ</b>	<b>793,4</b>	<b>837,7</b>	<b>1333,6</b>
	<i>Կենտրոնացված ջեռուցման համար</i>	"-	442,69	396,6	569,4
	ՋԷԿ-երից	"-	90,9	90,9	87,6
	Կաթսայատներից	"-	351,8	305,7	481,9
	<i>Արդյունաբերական կարիքների համար</i>	"-	350,7	441,1	764,2

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2001թ. ՀԱՇՎԵԿՇՈՒ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Հավելված 3

Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	1999թ. փաստացի	2000թ. սպասվող	2001թ. կանխատեսվող
<b>1</b> Բնական գազի ներկրում	մլն.մ մ <sup>3</sup>	<b>1226,5</b>	<b>1399,2</b>	<b>1528,3</b>
<b>2</b> Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում	մլն.մ մ <sup>3</sup>	100,05	92,62	86,80
Նույնը՝ %-ով ներկրված և ստորգետնյա պահեստարաններից և համակարգից առաքված գազի գումարային քանակության նկատմամբ	%	7,4%	6,4%	5,5%
<b>3</b> Գազի ծախսը սեփական կարիքների համար	մլն.մ մ <sup>3</sup>	11,85	10,31	8,90
Նույնը՝ %-ով ներկրված և ստորգետնյա պահեստարաններից և համակարգից առաքված գազի գումարային քանակության նկատմամբ	%	0,88%	0,71%	0,56%
<b>4</b> Մղվել է ստորգետնյա պահեստարաններ	մլն.մ մ <sup>3</sup>	64,60	110,34	50,00
<b>5</b> Արտահանվել է պահեստարաններից	"-	117,30	47,85	50,00
<b>6</b> Հաշվարկային տարում գազատարներում պաշարված (ակումուլացված) գազի քանակության փոփոխությունը "-"-պաշարների նվազում, "-"-պաշարների ավելացում	"-	0,5	0,1	-0,2
<b>7</b> Բնական գազի առաքումը սպառողներին որից՝	"-	<b>1167,80</b>	<b>1233,88</b>	<b>1432,40</b>
<i>Էներգետիկ համակարգ</i>	"-	826,30	825,40	809,00
<i>Արդյունաբերություն</i>	"-	139,10	176,10	256,70
<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	"-	13,90	16,30	18,60
<i>Կոմունալ-կենցաղային ոլորտ</i>	"-	<b>144,91</b>	<b>171,00</b>	<b>228,50</b>
որից՝ բնակչություն	"-	80,61	111,80	144,00
ջեռուցման համակարգ	"-	64,30	59,20	84,50
<i>Այլ սպառողներ</i>	"-	43,59	45,08	119,60

## Տեղեկատվություն

## 1999թ. սակագնում նախատեսված և փաստացի արտադրված, առաքված էլեկտրաէներգիայի մասին

	Չափման միավոր	Սակագնով նախատեսված	Փաստացի
<b>էլեկտրաէներգիայի օգտակար առաքում</b>	մլն կՎտժ	5940,01	5778,4
այդ թվում՝			
Հրազդան ԶԷԿ	մլն կՎտժ	1729,2	1820,6
Երևան ԶԷԿ	մլն կՎտժ	411,8	416,2
ՀԱԷԿ	մլն կՎտժ	2199	1889,6
Սևան-Հրազդան	մլն կՎտժ	540	341,5
Որոտան	մլն կՎտժ	940	724,3
Փոքր ՀԷԿ - եր	մլն կՎտժ	49,65	58,0
Ձորահէկ	մլն կՎտժ	70,36	65,7
Ներհոսք՝	մլն կՎտժ	0	462,5
որից՝ ԼՂՀ	մլն կՎտժ	0	5,1
ԻԻՀ	մլն կՎտժ	0	457,4
<b>Բարձրավոլտ էլեկտրացանց էլեկտրաէներգիայի մուտք</b>	մլն կՎտժ	5940,01	5778,4
<b>Կորուստները Բարձրավոլտ էլեկտրացանցում</b>	մլն կՎտժ	335,61	339,5
	%	5,65	5,88
<b>Բարձրավոլտ էլեկտրացանցի կողմից օգտակար առաքված էլեկտրաէներգիան, որից</b>	մլն կՎտժ	5604,4	5438,9
1. Բաշխիչ ցանցեր՝	մլն կՎտժ	5345,77	4719
որից՝ Երևանի էլ. ցանց	մլն կՎտժ	5345,77	1840,9
Հարավային էլ. ցանց	մլն կՎտժ		1080,5
Կենտրոնական էլ. ցանց	մլն կՎտժ		1197,7
Հյուսիսային էլ. ցանց	մլն կՎտժ		599,90
2. Արտահոսք՝	մլն կՎտժ	258,63	703,60
որից՝ ԼՂՀ	մլն կՎտժ	108,63	89,20
Վրաստան	մլն կՎտժ	150	244,30
ԻԻՀ	մլն կՎտժ	0	370,10
3. Արտադրող կայաններ (տնտ. կարիքների համար)	մլն կՎտժ	0	16,30
<b>Բաշխիչ ցանցերից էլեկտրաէներգիայի առաքումը</b>	մլն կՎտժ	4758,12	3628,30
<b>Կորուստները Բաշխիչ էլեկտրացանցում</b>	մլն կՎտժ	587,65	1090,7
	%	11,0	23,1
որից՝ Երևանի էլ. ցանց	մլն կՎտժ	4758,12	438,50
	%		23,82
Հարավային էլ. ցանց	մլն կՎտժ		142,10
	%		11,86
Կենտրոնական էլ. ցանց	մլն կՎտժ		319,20
	%		26,65
Հյուսիսային էլ. ցանց	մլն կՎտժ		190,90
	%		31,82
որից՝ Երևանի էլ. ցանց	մլն կՎտժ		1402,40
Հարավային էլ. ցանց	մլն կՎտժ		938,40
Կենտրոնական էլ. ցանց	մլն կՎտժ		878,50
Հյուսիսային էլ. ցանց	մլն կՎտժ		409,00

Հավելված 5

1999թ էլեկտրական էներգիայի համակարգի ընկերությունների կողմից կատարված ծախսերի վերլուծություն

մլն դրամ առանց ԱԱՀ-ի

		Սակագնով նախատես- ված	%	Ընկերության կողմից հաշվեգրված	%
1	2	3	4	5	6
2	Վառելիք	38340	42	36256	55
3	Նյութական ծախսեր	8979	10	5562	8
4	Նորոգման ծախսեր	20819	23	1604	2
5	Աշխատավարձ	10367	11	10645	16
6	Սոց.ապահով.	2903	3	2582	4
7	Ամորտիզացիա	2947	3	3198	5
8	Այլ ծախսեր	3929	4	4256	6
9	ՀԱԷԿ-ի հատուկ Ֆոնդ	1910	2	1518	2
10	Վարկի սպասարկում	1612	2	1171	2
11	Ընդամենը հիմնական գործ. ծախսեր	91805	100	66792	100